



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԵԴ/37654/02/22**
2025թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵԴ/37654/02/22

Նախագահող դատավոր՝ Ս. Թորոսյան

Դատավորներ՝

Ն. Մարգարյան

Կ. Համբարձումյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող
զեկուցող*

Ա. ՄԿՐՏՉԱՆ
Ս. ՄԵՂՐՅԱՆ
Ն. ՀՈՎՍԵՓՅԱՆ
Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
Վ. ՔՈՉԱՐՅԱՆ

2025 թվականի նոյեմբերի 14-ին

գրավոր ընթացակարգով քննելով Կարեն Մխիթարյանի և Անժելա Հարությունյանի
(այսուհետ՝ Համապատասխանողներ) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի 17.03.2023 թվականի որոշման դեմ՝ ըստ Արամ Սանոսյանի հայցի ընդդեմ
Համապատասխանողների՝ գործարքները լուծելու պահանջների մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Արամ Սանոսյանը պահանջել է լուծել թիվ ԵԴ/3447/02/19
քաղաքացիական գործով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության
դատարանի 07.06.2019 թվականի վճռով հաստատված հաշտության համաձայնության

2-րդ և 3-րդ կետերում թվարկված գործարքները՝ որոշելով նշված գործարքների լուծման հետևանքները, մասնավորապես՝ սահմանելով պատասխանողների՝ մինչ օտարումն իրենց ունեցած անշարժ գույքերի շուկայական արժեքի փոխհատուցման չափը՝ ելնելով այդ գործարքները կատարելու կապակցությամբ իր ու պատասխանողների կողմից կրած ծախսերն իրար միջև արդարացի բաշխելու անհրաժեշտությունից:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 24.11.2022 թվականի որոշմամբ քաղաքացիական գործի վարույթը կարճվել է՝ քաղաքացիական դատավարության կարգով այն քննության ենթակա չլինելու հիմքով:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 17.03.2023 թվականի որոշմամբ Արամ Սանոսյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 24.11.2022 թվականի «Գործի վարույթը կարճելու միջնորդությունը քննության առնելու մասին» որոշումը վերացվել է:

Վճռաբեկ բողոք են ներկայացրել Համապատասխանողները (ներկայացուցիչ Էդիկ Ոսկանյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է Սահմանադրության 63-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-468-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ, 6-9-րդ, 151-րդ, 182-րդ և 381-րդ հոդվածները:

Բողոք բերած անձինք նշված հիմքերի առկայությունը պատճառաբանել են հետևյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի իրականացրել գործի լրիվ, բազմակողմանի և ամբողջական քննություն, վերջինիս կայացրած դատական ակտն օրինական, հիմնավորված ու պատճառաբանված չէ, այն չի պարունակում ապացույցների գնահատման, փաստերի հաստատման և իրավունքի կիրառման գործընթացի կապակցությամբ դատարանի դատողությունների ընթացքն ու դրանից բխող եզրահանգումները, դրանում արտացոլված չեն այն կայացնելու համար անհրաժեշտ և բավարար փաստական ու իրավական հիմքերը:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ հաշտության համաձայնությունը հաստատող դատարանի վճիռն իր դատավարական նշանակությամբ և հետևանքներով հավասարեցված է գործն ըստ էության լուծող վճռին, որի կամավոր չկատարումը հանգեցնում է դատական ակտի հարկադիր կատարման, հետևաբար գործն ըստ էության լուծող դատական ակտի նկատմամբ գործարքի փոփոխման նորմերը կիրառելի չեն:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձինք պահանջել են բեկանել Վերաքննիչ դատարանի 17.03.2023 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 24.11.2022 թվականի «Գործի վարույթը կարճելու միջնորդությունը քննության առնելու մասին»

որոշմանը:

3. Վճարելի բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

1) Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 07.06.2019 թվականի թիվ ԵԴ/3447/02/19 վճռով հաստատել է Արամ Սանոսյանի և Կարեն Մխիթարյանի միջև կնքված հաշտության համաձայնությունը հետևյալի մասին.

«(...) 1. Արամ Արտյուշի Սանոսյանը պարտավորվում է վճարել Կարեն Վանիկի Մխիթարյանին և Անժելա Հարությունյանին 6.737.640 (վեց միլիոն յոթ հարյուր երեսունյոթ հազար վեց հարյուր քառասուն) ՀՀ դրամ, սույն հաշտության համաձայնությունը ստորագրելուց և դատարանի կողմից հաստատվելուց հետո, Կարեն Մխիթարյանի և Անժելա Հարությունյանի կողմից ^{*****1} հասցեում գտնվող անշարժ գույքը և ^{*****2} հասցեում գտնվող ավտոմեքենան հասցեում գտնվող անշարժ գույքը հանձնելու պահին:

2. Արամ Արտյուշի Սանոսյանը պարտավորվում է ^{*****3} հասցեում կառուցվող բազմաբնակարան շենքից (բնակարանը գտնվելու է ^{*****4} փողոցի վրա կառուցվող շենքում) ձեռք բերել և սեփականության իրավունքով Կարեն Վանիկի Մխիթարյանին և Անժելա Հարությունյանին փոխանցել 7-րդ հարկում 58 (հիսունութ) ք.մ. մակերեսով մեկ բնակարան և այդ բնակարանին կից 42 (քառասուներկու) ք.մ. մակերեսով մեկ բնակարան՝ ներքին հարդարմամբ, որը պետք է կատարված լինի Արամ Սանոսյանի որոշած տեսակի և արժեքի նյութերով (լուսամուտները, դրսի դռները պետք է լինեն տեղադրված, միջսենյակային պատերը շարված, գաջած, ներկված սպիտակ ներկով, լամինատե հատակները (մեկ ք.մ. մինչև երկու հազար ՀՀ դրամ արժողությամբ), ներքին դռները (յուրաքանչյուրը մինչև քսանչորս հազար ՀՀ դրամ արժողությամբ), սանիտարական սարքավորումները (լվացարանը մինչև տասնչորս հազար ՀՀ դրամ արժողությամբ, զուգարանակոնքը մինչև քսանչորս հազար ՀՀ դրամ արժողությամբ), էլեկտրական վարթակները և անջարիչները (յուրաքանչյուր բնակարանի համար ընդհանուր գնով մինչև տասնհինգ հազար ՀՀ դրամ արժողությամբ) տեղադրված, ինչպես նաև սանհանգույցը սալիկապատված (մեկ ք.մ. մինչև երկու հազար ՀՀ դրամ արժողությամբ)), սույն հաշտության համաձայնությունը ստորագրելուց և դատարանի կողմից հաստատվելուց հետո 36 (երեսունվեց) ամսվա ընթացքում:

3. Արամ Արտյուշի Սանոսյանը պարտավորվում է, որպես սույն հաշտության համաձայնության 2-րդ կետում նշված բնակարանների տրամադրման ապահովում տրամադրել 36.094.500 (երեսունվեց միլիոն իննսունչորս հազար հինգ հարյուր) ՀՀ դրամի չափով բանկային երաշխիք Կարեն Վանիկի Մխիթարյանի և Անժելա Հարությունյանի կողմից սույն համաձայնության 6-րդ կետում նշված գույքը հանձնելուց հետո 15 (տասնհինգ) օրվա ընթացքում: Սույն հաշտության համաձայնության 2-րդ կետում նշված պարտավորությունը Արամ Սանոսյանի կողմից չկատարելու դեպքում Կարեն Վանիկի Մխիթարյանը և Անժելա Հարությունյանը իրավունք ունեն պահանջել Արամ Սանոսյանից

¹ Առկա է անձնական տվյալ

² Առկա է անձնական տվյալ

³ Առկա է անձնական տվյալ

⁴ Առկա է անձնական տվյալ

վճարել բնակարանների տվյալ պահին գործող շուկայական արժեքին համարժեք գումար կամ ստանալ բանկային երաշխիքով սահմանված գումարը, իսկ եթե այդ գումարը բնակարանների տվյալ պահի շուկայական գնից պակաս լինելու դեպքում, տարբերություն կազմող գումարը ստանալ Արամ Սանոսյանից:

4. Մեկ ԱՄՆ դոլարի փոխարժեքը 481,26 ՀՀ դրամ է: Սույն հաշվության համաձայնությամբ գումարի վճարման օրը ԱՄՆ դոլարի փոխարժեքի ՀՀ դրամի նկատմամբ փոփոխության դեպքում կատարվում է վճարման ենթակա գումարի ինդեքսավորում: Սույն կետը չի կարող որևէ կերպ մեկնաբանվել արտարժույթով գնանշում:

5. *****⁵ հասցեում գտնվող ավտոտնակ հասցեում գտնվող անշարժ գույքը՝ 0.004757 հա հողամասը և 31.7 ք.մ. մակերեսով ավտոտնակը Կարեն Վանիկի Մխիթարյանի և Անժելլա Հարությունյանի կողմից սեփականության իրավունքով հանձնվում է Արամ Արտյուշի Սանոսյանին: Սույն հաշվության համաձայնությունը դատարանի կողմից հաստատվելուց հետո, դատարանի վճիռը ներկայացվում է ՀՀ ԿԱ Անշարժ Գույքի Կադաստրի Պետական Կոմիտեի համապատասխան ստորաբաժանում *****⁶ հասցեում գտնվող ավտոտնակ հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ Արամ Արտյուշի Սանոսյանի սեփականության իրավունքը գրանցելու համար:

6. Կարեն Վանիկի Մխիթարյանը և Անժելլա Հարությունյանը պարտավորվում են *****⁷ հասցեում գտնվող անշարժ գույքը և *****⁸ հասցեում գտնվող ավտոտնակ հասցեում գտնվող անշարժ գույքը փաստացի հանձնել Արամ Սանոսյանին սույն հաշվության համաձայնությունը ստորագրելուց և դատարանի կողմից հաստատվելուց հետո 15 /տասնհինգ/ օրվա ընթացքում:

7. Կողմեր հաստատում են, որ սույն հաշվության համաձայնությունը դատարանի վճռով հաստատվելու և սույն հաշվության համաձայնությամբ սահմանված պարտավորությունները կատարելու պահից կողմերը միմյանց հանդեպ սույն վեճի (*****⁹ հասցեի անշարժ գույքի և *****¹⁰ հասցեում գտնվող ավտոտնակի վերաբերյալ) շրջանակներում պահանջ կամ պարտավորություններ չունեն: (...):»:

Նշված վճիռը չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ (**հատոր 1-ին, գ.թ. 80-85**).

2) սույն գործով ներկայացված հայցադիմումով Արամ Սանոսյանը, որպես իրավական հիմք վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 467-րդ հոդվածը, խնդրել է լուծել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 07.06.2019 թվականի թիվ ԵԴ/3447/02/19 վճռով հաստատված հաշտության համաձայնության 2-րդ և 3-րդ կետերում թվարկված գործարքները՝ որոշելով նշված գործարքների լուծման հետևանքները, մասնավորապես՝ սահմանելով պատասխանողների՝ մինչ օտարումն իրենց ունեցած անշարժ գույքերի շուկայական արժեքի փոխհատուցման չափը՝ ելնելով այդ գործարքները կատարելու կապակցությամբ իր ու պատասխանողների կողմից կրած ծախսերն իրար միջև արդարացի բաշխելու անհրաժեշտությունից (**հատոր 1-ին, գ.թ. 56-**

⁵ Առկա է անձնական տվյալ

⁶ Առկա է անձնական տվյալ

⁷ Առկա է անձնական տվյալ

⁸ Առկա է անձնական տվյալ

⁹ Առկա է անձնական տվյալ

¹⁰ Առկա է անձնական տվյալ

64).

3) Դատարանի 24.11.2022 թվականի «Գործի վարույթը կարճելու միջնորդությունը քննության առնելու մասին» որոշմամբ քաղաքացիական գործի վարույթը կարճվել է՝ քաղաքացիական դատավարության կարգով այն քննության ենթակա չլինելու հիմքով (**հատոր 1-ին, գ.թ. 127-132**):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ բողոքարկվող դատական ակտը կայացնելիս Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 151-րդ ու 182-րդ հոդվածների խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը դատական ակտի վերջնական և պարտադիր լինելու համարեքստում հարկ է համարում անդրադառնալ օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատված հաշտության համաձայնության դրույթները վերանայելու պահանջների քաղաքացիական դատավարության կարգով քննության ենթակա լինելու հարցին:

Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: (...):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) կողմից դատարանի մատչելիության իրավունքի վերաբերյալ ձևավորված կայուն նախադեպային իրավունքի համաձայն՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է անձի իրավունքներին և պարտականություններին առնչվող հայցով դատարան դիմելու իրավունքը: Այդ դրույթը մարմնավորում է դատարան դիմելու, այն է՝ դատարանում հայց հարուցելու իրավունքը, որը հնարավորություն է տալիս օգտվելու Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետում նախատեսված մյուս երաշխիքներից: Դատական վարույթի արդար, հրապարակային և արագ բնութագրիչները, անշուշտ, արժեք չեն ունենա, եթե այդ գործընթացներին ընթացք չի տրվում: Դժվար է պատկերացնել իրավունքի

գերակայություն արդարադատություն իրականացնելիս, եթե դատարան դիմելու իրավունքը չի ապահովվում (*Կրեյս v. Poland (28249/95) գործով Եվրոպական դատարանի 19.06.2001 թվականի վճիռը, 52-րդ կետը*):

Եվրոպական դատարանի տեսանկյունից՝ դատարանի իրավունքը բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդ սահմանափակումները թույլատրվում են, քանի որ մատչելիության իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից որոշակի կարգավորումներ, և այս առումով պետությունը որոշակի հայեցողական լիազորություն ունի: Սակայն դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը պետք է իրականացվի այնպես, որ չխախտի կամ զրկի անձին մատչելիության իրավունքից այնպես կամ այն աստիճան, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը (*Կրեյս v. Tolstoy Miloslavsky v. The United Kingdom (18139/91) գործով Եվրոպական դատարանի 13.07.1995 թվականի վճիռը, 59-րդ կետը*):

Ըստ Եվրոպական դատարանի՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը չի կարող համատեղելի լինել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ, եթե այն չի հետապնդում իրավաչափ նպատակ, և եթե առկա չէ ողջամիտ հարաբերակցություն ձեռնարկվող միջոցների ու հետապնդվող նպատակների միջև՝ համաչափության առումով (*Կրեյս v. Khalifaoui v. France (34791/97) գործով Եվրոպական դատարանի 14.12.1999 թվականի վճիռը, 36-րդ կետը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների համատեքստում անդրադարձել է իրավական որոշակիության սկզբունքին և այդ սկզբունքի շրջանակներում՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի պարտադիրության հատկանիշին՝ արձանագրելով, որ արդար դատաքննության իրավունքը պահպանված է այն դեպքում, երբ անձը հնարավորություն ունի ստանալու որոշակի, հաստատուն որոշում՝ կապված իր իրավունքների և պարտականությունների հետ, ու կարող է համոզված լինել, որ որոշ ժամանակ անց այդ որոշումը չի վերացվի: Իրավական որոշակիության սկզբունքի բովանդակության մեջ, ի թիվս այլնի, ներառվում է նաև դրույթ այն մասին, որ կողմերից ոչ մեկը չի կարող պահանջել վերջնական, այսինքն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայում՝ միայն կրկնակի քննության իրականացման և նոր ակտի կայացման նպատակով: Նահանջն այդ սկզբունքից արդարացված է միայն այն դեպքում, երբ դա անհրաժեշտ է էական և անհերքելի բնույթ ունեցող հանգամանքներում:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ իրավական որոշակիության սկզբունքի բովանդակության մեջ ներառվում են հետևյալ դրույթները.

- դատարանների կողմից կայացված վերջնական, այսինքն՝ օրինական ուժի մեջ մտած դատական որոշումները ենթակա չեն վերանայման,

- անթույլատրելի է դատարանի կողմից արդեն մեկ անգամ լուծված գործի կրկնակի քննություն,

- կողմերից ոչ մեկը չի կարող պահանջել վերջնական, այսինքն՝ օրինական ուժի մեջ մտած, դատական ակտերի վերանայում՝ միայն կրկնակի քննության իրականացման և նոր ակտի կայացման նպատակով,

- վերջնական դատական ակտի վերանայումը նահանջ չէ իրավական որոշակիության սկզբունքից, եթե այն իրականացվում է դատական սխալի, արդարադատության սխալ իրականացման ուղղման նպատակով,

- վերանայումը չի կարող լինել բողոքարկման քողարկված ձև, իսկ գործի նկատմամբ կողմերի հակադիր հայացքների առկայությունն ինքնին չի կարող հիմք ծառայել վերջնական դատական ակտի վերանայման համար (*տե՛ս Գայանե Վարդանյանն ընդդեմ Վարդան ու Միշա Վարդանյանների և մյուսների թիվ ԱՐԴ/0062/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով իրավական որոշակիության սկզբունքին, արձանագրել է, որ իրավական որոշակիության սկզբունքը, ըստ էության, երաշխավորում է օրինական ուժի մեջ մտած դատական ակտի կայունությունը, ինչը, ի թիվս այլ հատկանիշների (անհերքելիություն, բացառիկություն, նախադատելություն), ենթադրում է այդպիսի դատական ակտի պարտադիրությունը: Պարտադիրության հատկանիշն անմիջականորեն բխում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածի իրավակարգավորումից և ենթադրում է, որ պետական ու տեղական ինքնակառավարման մարմինները, իրավաբանական անձինք և քաղաքացիներն իրենց գործունեության ընթացքում պարտավոր են հաշվի առնել օրինական ուժի մեջ մտած դատական ակտն ու իրավունք չունեն տվյալ դատական ակտով կայացված հարցի վերաբերյալ կայացնելու նոր որոշում (*տե՛ս Անժելա և Նունե Հարությունյաններն ընդդեմ Բեգլար Մկրտումյանի թիվ ԵԱԴԴ/0913/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.12.2015 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները և Եվրոպական դատարանի կայուն նախադեպային իրավունքը, արձանագրել է, որ իրավական որոշակիության սկզբունքի առանցքային տարրերից մեկը դատական ակտերի կայունության կամ *res judicata* սկզբունքն է, որի ցանկացած խախտում հանգեցնում է իրավական որոշակիության խաթարման ու ազդում իրավունքի գերակայության սկզբունքի վրա: *Res judicata* սկզբունքի հիմքում ընկած է իրավական կարգադրագրերի կայունության, օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի անփոփոխելիության և համընդհանուր պարտադիրության գաղափարը, որով, ի թիվս այլնի, ապահովվում է դատարանների հեղինակությունն ու վստահությունը դատական իշխանության նկատմամբ: Իրավական պետության հայեցակարգից և դրանից ածանցվող իրավական որոշակիության սահմանադրաիրավական սկզբունքից բխում է օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի նկատմամբ վստահության, այլ կերպ ասած՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի ճշմարտացիության կանխավարկածը, ինչից էլ բխում է ներպետական դատարանների վերջնական դատողությունները հարգելու ու դրանք կասկածի տակ չդնելու կանոնը:

ՀՀ վճռաբեկ դատարանը հարկ է համարել նաև փաստել, որ օրինական ուժը դատական ակտի իրավական որոշակիության արտահայտումն է: Այդպիսով դատական ակտը ձեռք է բերում օրենքի ուժ՝ սահմանելով խիստ որոշակի վարքագծի կանոններ և դառնալով դրա հասցեատերերի համար պարտադիր: Բացի այդ, օրինական ուժի մեջ

մտնելու պահից է դատական ակտն ստանում վերջնական բնույթ՝ կարգավորելով վիճելի իրավահարաբերությունները, դառնում պարտադիր և ապահովվում պետական հարկադրանքի ուժով (*տե՛ս ըստ Նունուֆար Հովհաննիսյանի դիմումի թիվ ՍնԴ/1166/04/19 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 11.03.2025 թվականի որոշումը*):

Վերահաստատելով նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտի այնպիսի հատկանիշները, ինչպիսիք են անհերքելիությունը, բացառիկությունը, նախադատելիությունը, պարտադիրությունը և կատարելիությունը, ուղղված լինելով իրավունքի գերակայության, ներառյալ իրավական որոշակիության ու դրա դրսևորում հանդիսացող *res judicata* (դատական ակտերի վերջնական լինելու) սկզբունքի ապահովմանը, երաշխավորում են ոչ միայն դատական ակտով սահմանված պետաիշխանական պատվիրանների կենսագործումը, իրավունքի սուբյեկտների խախտված կամ վիճարկվող իրավունքների, ազատությունների և օրինական շահերի իրական պաշտպանությունը, այլ նաև դատական ակտի ու, որպես հետևանք, նաև քաղաքացիական շրջանառության կայունությունը՝ դատական վարույթի առարկա հանդիսացած վիճելի իրավահարաբերության սուբյեկտների և նրանց հետ որոշակի իրավահարաբերությունների մեջ գտնվող անձանց ու մարմինների մոտ ձևավորելով իրավաչափ համոզում, որ վիճելի իրավահարաբերությունն այլևս անվիճելի է, վեճն սպառված է, իսկ կայացված դատական ակտը որոշակի և հաստատուն է ու որոշ ժամանակ անց չի վերացվի կամ փոփոխվի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 11-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք իրենց պատկանող քաղաքացիական իրավունքները՝ ներառյալ դրանց պաշտպանության իրավունքը, իրականացնում են իրենց հայեցողությամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործին մասնակցող անձն իրականացնում է իր դատավարական իրավունքները, տնօրինում է դատական պաշտպանության միջոցները և եղանակները սեփական հայեցողությամբ՝ օրենքով սահմանված կարգով:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նույն օրենսգրքով սահմանված կարգով (...) կողմերը կարող են վեճը լուծել հաշտության համաձայնությամբ, սկսել արտոնագրված հաշտարարի մասնակցությամբ հաշտարարական գործընթաց կամ գործը հանձնել արբիտրաժի լուծմանը:

ՀՀ վճռաբեկ դատարանը բազմիցս անդրադարձել է տնօրինչականության սկզբունքի բովանդակությանը՝ արձանագրելով, որ այն քաղաքացիական դատավարության հիմնաքարային սկզբունքներից է, որը յուրաքանչյուրի համար երաշխավորում է սեփական հայեցողությամբ իր նյութական և դատավարական իրավունքներն ու դրանց պաշտպանության եղանակները տնօրինելու հնարավորություն: Տնօրինչականության սկզբունքը կողմերին ընձեռում է իրենց հայեցողությամբ օրենքով նախատեսված որոշակի գործողություններ կատարելու կամ դրանց կատարումից հրաժարվելու ազատություն: Այն իր արտահայտումն է գտել դատարանի վարույթում գտնվող վեճը դատավարության ցանկացած փուլում հաշտության համաձայնությամբ ավարտելու գործին մասնակցող

անձանց վերապահված հնարավորությամբ: Ընդ որում, հաշտության համաձայնությունը գործին մասնակցող անձանց համատեղ կամահայտնության արդյունքն է, այսինքն՝ երկկողմանի փոխհամաձայնեցված տնօրինչական գործողությունը (*տե՛ս Սոնա Առաքելյանը և մյուսներն ընդդեմ Բուրասյան Դավթյանի և մյուսների թիվ ԱՐԱԴ/2965/02/17 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.10.2022 թվականի որոշումը*):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 151-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործին մասնակցող անձինք դատավարության ցանկացած փուլում կարող են գործն ավարտել հաշտության համաձայնությամբ, որը ձևակերպվում է գրավոր, ստորագրում են գործին մասնակցող անձինք և ներկայացվում է դատարանի հաստատմանը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը հաշտության համաձայնությունը քննարկվում է դատական նիստում՝ գործին մասնակցող անձանց մասնակցությամբ, եթե վերջիններս չեն միջնորդել հաշտության համաձայնությունն իրենց բացակայությամբ քննարկելու վերաբերյալ: Նախքան հաշտության համաձայնությունը հաստատելը դատարանը դատական նիստին ներկայացած գործին մասնակցող անձանց պարզաբանում է դրա դատավարական հետևանքները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հաշտության համաձայնությունը դատարանի կողմից հաստատվելու դեպքում դատարանը կայացնում է վճիռ:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դատարանը չի հաստատում հաշտության համաձայնությունը, եթե՝

1) այն հակասում է օրենքին կամ այլ իրավական ակտերին.

2) խախտում է այլ անձի իրավունքները կամ օրինական շահերը.

3) պարունակում է այնպիսի պայմաններ, որոնք թույլ չեն տալիս որոշակիորեն պարզել հատկացվող գումարի չափը, հանձնման ենթակա գույքը կամ այն գործողությունները, որոնք կողմը պարտավոր է կատարել.

4) պարունակում է այնպիսի պարտավորություններ, որոնց կատարումը պայմանավորված է մյուս կողմի պարտավորության կատարմամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործին մասնակցող անձանց հաշտության համաձայնությունը հաստատելու դեպքում առաջին ատյանի դատարանը վճիռ է կայացնում գործի վարույթը հաշտության համաձայնությամբ ավարտելու մասին, որը պետք է պարունակի նույն օրենսգրքի 192-րդ հոդվածի 2-րդ մասով, 3-րդ մասի 1-9-րդ կետերով սահմանված տեղեկությունները և հաշտության համաձայնության բառացի շարադրանքը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 198-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ գործի վարույթը հաշտության համաձայնությամբ ավարտելու մասին վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Մինչև 14.03.2024 թվականը գործած խմբագրությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը դատավարության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե դատարանը հաստատել է կնքված հաշտության համաձայնությունը, ներառյալ՝

հաշտարարության արդյունքով կնքված հաշտության համաձայնությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով դատական կարգով կնքված հաշտության համաձայնությանը, արձանագրել է, որ հաշտության համաձայնությունը կողմերի միջև փոխզիջման արդյունքում ձեռքբերված պայմանավորվածություն է, որը հաստատվում է դատարանի կողմից: Հաշտության համաձայնություն կնքելը տնօրինչական դատավարական գործողություն է, որի միջոցով կողմերը տնօրինում են ինչպես իրենց նյութական, այնպես էլ՝ դատավարական իրավունքները: Մասնավորապես, կնքելով նման համաձայնություն՝ կողմերը փոխադարձ պայմանավորվածությամբ որոշակի փոփոխության են ենթարկում վիճելի իրավահարաբերությունը՝ այդ իրավահարաբերության շրջանակներում ստանձնելով նոր պարտավորություններ կամ վիճելի իրավահարաբերությունը փոխարինելով մեկ այլ իրավահարաբերությամբ կամ ուղղակիորեն դադարեցնելով այն: Վերը նշվածում դրսևորվում է հաշտության համաձայնության նյութաիրավական (քաղաքացիաիրավական) կողմը: Հաշտության համաձայնությամբ կողմերը միաժամանակ տնօրինում են իրենց դատավարական իրավունքները, ինչի արդյունքում դատավարության հետագա ընթացքը գործի վարույթի կարճմամբ դադարում է: Նշվածում էլ դրսևորվում է հաշտության համաձայնության դատավարական կողմը: Ընդ որում, հաշտության համաձայնությունը հաստատող դատարանի վճիռն իր դատավարական նշանակությամբ և հետևանքներով հավասարեցված է գործն ըստ էության լուծող վճռին, որի կամավոր չկատարումը հանգեցնում է դատական ակտի հարկադիր կատարման (*տե՛ս «Յունիքանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Հրաշք Ապագա» ՍՊԸ-ի թիվ ԼԴ/0039/04/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.07.2016 թվականի որոշումը*):

«Լուսակերտի Հարություն թոշնաբուժական ֆաբրիկա» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎԴ/6098/05/17 վարչական գործով 21.07.2021 թվականի որոշման շրջանակում անդրադառնալով դատական ակտով հաստատված հաշտության համաձայնության հիման վրա անշարժ գույքի օտարումը փոխառության պայմանագրով ստացված գումարի չվերադարձված մասի դիմաց հարկային օրենսդրության իմաստով հարկվող գործարք հանդիսանալու հարցին՝ ՀՀ վճռաբեկ դատարանը, վերահաստատելով և զարգացնելով նախկինում արտահայտված դիրքորոշումները, արձանագրել է, որ քաղաքացիական դատավարությունում տնօրինչականության սկզբունքն առավել ցայտուն արտահայտվում է դատարանի վարույթում գտնվող վեճը հաշտության համաձայնությամբ ավարտելու կողմերին վերապահված հնարավորության մեջ, որն ուղղված է կողմերի միջև ծագած նյութաիրավական վեճի փոխադարձ կարգավորմանը՝ երկկողմանի ընդունելի պայմաններով: Միևնույն ժամանակ (...) տնօրինչականության սկզբունքը բացարձակ չէ, և նշված տնօրինչական գործողությունները կարող են իրացվել միայն օրինականության սկզբունքի պահպանության շրջանակներում՝ դատարանի վերահսկողություն ներքո: Այս տեսանկյունից դատարանի կողմից հաշտության համաձայնության հաստատումը դիտարկվում է որպես օրինականության սկզբունքի ապահովման նախադրյալ, քանի որ միայն նման պայմաններում է հնարավոր ճիշտ կիրառել նյութական իրավունքի նորմերը և հասնել վեճի օրինաչափ լուծման: Հետևաբար՝ կողմերի

կնքած հաշտության համաձայնությունը ենթակա է հաստատման դատարանի կողմից, որի արդյունքում կողմերը փոխադարձ նյութաիրավական գիշումների ճանապարհով նորովի որոշում են իրենց իրավունքները և պարտականությունները և պարտավորվում են կամավոր կարգավորել իրենց միջև ծագած վեճը՝ փոխադարձաբար ընդունելի պայմաններով: (...) դատական կարգով հաստատված հաշտության համաձայնությունը, ըստ էության, նույնացվում է «գործարք» եզրույթի բնորոշմանն այն հաշվառմամբ, որ վերջինիս պայմանների վավերականությունը պետք է քննարկվի նյութական օրենսդրության կարգավորումների լույսի ներքո, և միայն կնքման ձևը և դատավարական հետևանքները պետք է կարգավորվեն դատավարական օրենսդրությամբ:

Վերոգրյալով պայմանավորված՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատական կարգով կնքված հաշտության համաձայնությունը պետք է դիտարկել որպես՝

1. կողմերի տնօրինչական գործողություն, որն ուղղված է դատավարական վեճը լուծելու պայմանների համաձայնեցման միջոցով այն դադարեցնելուն,

2. նյութաիրավական վեճերն օրենքին չհակասող, այլ անձանց իրավունքները չխախտող փոխադարձաբար ընդունելի պայմաններով լուծելու եղանակ,

3. կողմերի միջև կնքվող քաղաքացիաիրավական պայմանագիր (գործարք), որի ուժով վերջիններս վիճելի իրավահարաբերության մասով նորից են որոշում իրենց իրավունքները և պարտականությունները՝ դրանով իսկ դադարեցնելով իրենց միջև եղած վեճը:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ, ի տարբերություն գործի վարույթն այլ հիմքերով կարճելու դեպքերի, կողմերի հաշտության համաձայնությունը հաստատելու հիմքով գործի վարույթը կարճելիս դատարանը կայացնում է գործն ըստ էության լուծող դատական ակտ՝ վճիռ, որն օրինական ուժի մեջ մտնելու պահից ձեռք է բերում վերջնական ակտերին հատուկ հատկանիշներ՝ անհերքելիություն, պարտադիրություն և կատարելիություն:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ հաշտության համաձայնությունը հաստատելու հիմքով գործի վարույթը կարճելու մասին վճռի եզրափակիչ մասում հաշտության համաձայնության բառացի շարադրանքը նշելու պահանջն ինքնանպատակ չէ: Հաշտության համաձայնության տեքստը բառացիորեն վերարտադրելով վճռի եզրափակիչ մասում՝ դատարանը դատական ակտում ոչ միայն արտացոլում է վեճը փոխադարձաբար ընդունելի պայմաններով լուծելու և վարույթը դադարեցնելու վերաբերյալ կողմերի կամահայտնությունը, այլ նաև վերարտադրում է այդ պայմանները՝ դրանց հաստատմամբ արձանագրելով այդ պայմանների համապատասխանությունը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 151-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված չափանիշներին, միաժամանակ **անհերքելիության, պարտադիրության ու կատարելիության հատկանիշ հաղորդելով նշված պայմաններից յուրաքանչյուրին:** Բացի այդ, վճռի եզրափակիչ մասում հաշտության համաձայնության բառացի շարադրանքի առկայությունը հնարավորություն է տալիս հետագայում շահագրգիռ անձի դիմումի հիման վրա կատարողական թերթ տրամադրելիս հաշտության համաձայնության բոլոր պայմանները նույնությամբ վերարտադրել հարկադիր կատարման հիմք հանդիսացող տվյալ փաստաթղթում՝ դրանով իսկ ամրագրելով օրենքով նախատեսված հարկադիր կատարման գործիքակազմով նշված պայմաններից յուրաքանչյուրի կատարումն ապահովելու պետության պոզիտիվ

պարտականությունը:

Դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու պահից եզրափակիչ դատական ակտը, այդ թվում՝ գործի վարույթը հաշտության համաձայնությամբ ավարտելու մասին վճիռը, դառնում է վերջնական, քանի որ սպառվում է դրա հետագա բողոքարկման ու վերանայման հնարավորությունը, և այն ձեռք է բերում իրավական ակտի որոշակիության հատկանիշ՝ խիստ որոշակիացնելով վեճի կողմերի սուբյեկտիվ իրավունքներն ու պարտականությունները, վերջնականորեն դադարեցնելով սուբյեկտիվ իրավունքի մասին վեճը: Վերջնական դառնալու պահից էլ դատական ակտի կատարումն ապահովվում է պետական հարկադրանքի ուժով, իսկ **դրա վերանայումը հնարավոր է դառնում միայն օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով:**

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանի՝ օրինական ուժի մեջ չմտած դատական ակտի վերաքննության կարգով վերանայման իրավունքն ապահովվում է օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը բողոքարկվում են օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանի վճիռների (...) դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն գործին մասնակցող անձինք:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վճռի, (...) դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել այն հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 415-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով կարող են վերանայվել առաջին ատյանի դատարանի (...)՝ օրինական ուժի մեջ մտած այն դատական ակտերը, որոնք ենթակա են բողոքարկման, (...):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման բողոք ներկայացնելու իրավունք ունեն՝ գործին մասնակցող անձինք (...):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման բողոք կարող է բերվել երեք ամսվա ընթացքում, (...):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատական ակտի վերանայման բողոք չի կարող ներկայացվել, եթե դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո անցել է քսան տարի: Նշված ժամկետը ենթակա չէ վերականգնման:

Վերը նշված իրավական նորմերի և արտահայտված իրավական դիրքորոշումների համակարգային վերլուծությունից բխում է, որ օրենսդիրը գործին մասնակցող անձանց ոչ միայն վերապահել է դատավարության ցանկացած փուլում գործը հաշտության համաձայնությամբ ավարտելու, այլ նաև գործի վարույթը հաշտության համաձայնությամբ ավարտելու մասին վճիռը սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության

վերաքննիչ քաղաքացիական դատարան բողոքարկելու, ինչպես նաև օրենքով սահմանված ժամկետներում իրավասու դատարանին նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման բողոք ներկայացնելու իրավունք:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թեև հաշտության համաձայնությունը հանդիսանում է դատական վարույթի կողմերի ազատ կամահայտնությամբ կնքվող պայմանագիր (գործարք), որն ուղղված է փոխադարձաբար ընդունելի պայմաններով քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դադարեցնելուն, այդուհանդերձ վեճն ըստ էության լուծող դատական ակտով՝ վճռով հաստատվելու փաստի ուժով այն իր էությամբ ու իրավական հետևանքներով փոխակերպվում է դատական ակտի և կարող է վիճարկվել բացառապես օրենքով նախատեսված բողոքարկման կամ վերանայման մեխանիզմով: Նման պայմաններում գործին մասնակցող անձինք հաշտության համաձայնության դրույթները կարող են վիճարկել միայն տվյալ հաշտության համաձայնությունը հաստատած վճռի բողոքարկման կամ վերանայման օրենքով նախատեսված ընթացակարգերով: Համապատասխանաբար դատարանի վճռով հաստատված հաշտության համաձայնության կամ դրա առանձին պայմանների նկատմամբ քաղաքացիական օրենսդրության՝ գործարքների անվավերության, պայմանագիրը դատական կարգով փոփոխելու կամ լուծելու վերաբերյալ իրավակարգավորումները կիրառելի չեն, հետևաբար դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատված հաշտության համաձայնության պայմանները վերանայելու վերաբերյալ հայցերը, անկախ դրանց հիմքերից, ենթակա չեն քննության քաղաքացիական դատավարության կարգով, քանի որ այլևս դուրս են դատարանի իրավասության շրջանակներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե գործը ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով:

Մինչև 14.03.2024 թվականը գործած խմբագրությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը դատավարության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե գործը ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն դեպքում, երբ գործին մասնակցող անձինք չեն օգտվում դատական ակտը բողոքարկելու օրենքով իրենց վերապահված հնարավորությունից, և գործի վարույթը հաշտության համաձայնությամբ ավարտելու մասին վճիռը մտնում է օրինական ուժի մեջ, այդ պահից այն ստանում է վերջնական բնույթ, դառնում է անհերքելի (անփոփոխելի, անբողոքարկելի), պարտադիր ու ապահովվում է պետական հարկադրանքի ուժով, իսկ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, իրավաբանական անձինք ու քաղաքացիներն իրենց գործունեության ընթացքում պարտավոր են հաշվի առնել օրինական ուժի մեջ մտած դատական ակտը և իրավունք չունեն տվյալ դատական ակտով լուծված հարցի վերաբերյալ կայացնելու նոր որոշում: Ըստ այդմ, դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատված հաշտության համաձայնության պայմանները վերանայելու վերաբերյալ

հայցադիմումի ընդունումը պետք է մերժվի, իսկ այն դեպքում, երբ այն սխալմամբ ընդունվել է վարույթ, դատարանը պարտավոր է կայացնել գործի վարույթը կարճելու վերաբերյալ դատական ակտ՝ գործը քաղաքացիական դատավարության կարգով քննության ենթակա չլինելու հիմքով:

Վերը նշված իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 07.06.2019 թվականի թիվ ԵԴ/3447/02/19 վճռով հաստատվել է Արամ Սանոսյանի և Կարեն Մխիթարյանի միջև կնքված հաշտության համաձայնությունը: Նշված վճիռը չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ (տե՛ս փաստ 1):

Դիմելով դատարան՝ Արամ Սանոսյանը պահանջել է լուծել թիվ ԵԴ/3447/02/19 քաղաքացիական գործով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 07.06.2019 թվականի վճռով հաստատված հաշտության համաձայնության 2-րդ և 3-րդ կետերում թվարկված գործարքները՝ որոշելով նշված գործարքների լուծման հետևանքները, մասնավորապես՝ սահմանելով պատասխանողների՝ մինչ օտարումն իրենց ունեցած անշարժ գույքերի շուկայական արժեքի փոխհատուցման չափը՝ ելնելով այդ գործարքները կատարելու կապակցությամբ իր ու պատասխանողների կողմից կրած ծախսերն իրար միջև արդարացի բաշխելու անհրաժեշտությունից:

Դատարանը 24.11.2022 թվականի «Գործի վարույթը կարճելու միջնորդությունը քննության առնելու մասին» որոշմամբ քաղաքացիական գործի վարույթը կարճել է քաղաքացիական դատավարության կարգով այն քննության ենթակա չլինելու հիմքով՝ պատճառաբանելով, որ «(...) Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը 07.06.2019 թվականին կայացված թիվ ԵԴ/3447/02/19 վճռով հաստատվել է կողմերի կնքած հաշտության համաձայնությունը, որով կողմերը համաձայնության են եկել բնակարաններ տրամադրելու, բնակարանները վերանորոգելու, փոխհատուցում տրամադրելու վերաբերյալ: Հաշտության համաձայնությունը հաստատվելու մասին դատարանի վճիռը չի բողոքարկվել և ստացել է օրինական ուժ: Սույն հայցով հայցվորը վիճարկում է օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված հաշտության համաձայնության դրույթները, որպիսի հարցի քննության իրավասություն օրենսդիրը սույն դատարանին չի օժտել հակառակ մեկնաբանության դեպքում, կիսախտվի օրինական ուժ ստացած դատական ակտի պարտադիրության, ինչպես նաև օրինականության սկզբունքը»:

Վերաքննիչ դատարանի 17.03.2023 թվականի որոշմամբ Արամ Սանոսյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 24.11.2022 թվականի «Գործի վարույթը կարճելու միջնորդությունը քննության առնելու մասին» որոշումը վերացվել է այն պատճառաբանությամբ, որ «(...) Վերոգրյալ դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով Դատարանի նշված եզրահանգման իրավաչափությունը՝ Վերաքննիչ դատարանը այն գնահատում է ոչ իրավաչափ, քանի որ նախ՝ հայցվորը վիճարկում է ոչ թե օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված հաշտության համաձայնության դրույթները, այլ՝ այդ դատական ակտով հաստատված հաշտության համաձայնությամբ կողմերի միջև

կնքվող քաղաքացիաիրավական պայմանագիրն այլ հիմքով լուծելու հարց է առաջ քաշում և երկրորդ Դատարանն անտեսել է, որ հաշտության համաձայնությունը տնօրինչական սկզբունքի իրացման արդյունքում կողմերի միջև կնքվող գործարք է, որի ուժով վերջիններս վիճելի իրավահարաբերության մասով նորից են որոշում իրենց իրավունքները և պարտականությունները՝ դրանով իսկ վերացնելով նախկինում իրենց միջև եղած վեճը, ինչն էլ իր հերթին վկայում է այն մասին, որ դրանից հետո պայմանագրի լուծման պահանջը չի կարող դուրս լինել դատարանի քննության առարկայի շրջանակներից:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վերաքննիչ դատարանը հանգում է հետևության, որ Դատարանը կայացրել է քաղաքացիական գործի վարույթը կարճելու մասին որոշում, առանց դրա իրավական հիմքերի առկայության, ուստի վերաքննիչ բողոքի համապատասխան հիմքի առկայությունը բավարար է Դատարանի որոշումը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածի 2-րդ մասի կիրառմամբ վերացնելու և քաղաքացիական գործը նույն դատարան՝ ամբողջ ծավալով նոր քննություն ուղարկելու համար»:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների համատեքստում անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանը նախևառաջ արձանագրում է, որ սույն գործի լուծման համար էական նշանակություն ունի այն հանգամանքը, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 07.06.2019 թվականի թիվ ԵԴ/3447/02/19 վճռով հաստատված համաձայնությունը չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ:

Տվյալ դեպքում Արամ Սանոսյանի կողմից դատարան է ներկայացվել վերը նշված վճռով հաստատված հաշտության համաձայնության 2-րդ և 3-րդ կետերում թվարկված գործարքները լուծելու պահանջ, այսինքն՝ սույն գործով վեճի առարկան օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված հաշտության համաձայնության դրույթներն են, որպիսի իրավաչափ եզրահանգման եկել է Դատարանը:

Վճռաբեկ դատարանը, վերահաստատելով «Լուսակերտի Հարություն թոշնաբուժական ֆաբրիկա» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎԴ/6098/05/17 վարչական գործով 21.07.2021 թվականի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումը, որ դատական ակտով հաստատված հաշտության համաձայնությունը, ի թիվս այլի, պետք է դիտարկել նաև որպես կողմերի միջև կնքվող քաղաքացիաիրավական պայմանագիր (գործարք), հարկ է համարում արձանագրել, որ այն արտահայտվել է դատական ակտով հաստատված հաշտության համաձայնության հիման վրա անշարժ գույքի օտարումը փոխառության պայմանագրով ստացված գումարի չվերադարձված մասի դիմաց հարկային օրենսդրության իմաստով «հարկվող գործարք» հանդիսանալու հարցի համատեքստում, և ամենևին չի հետապնդել նպատակ թե՛ նյութաիրավական և թե՛ դատավարական հետևանքներով նույնացնելու «գործարք (պայմանագիր)» և «դատական ակտով հաստատված հաշտության համաձայնություն» հասկացությունները՝ ինքնաբերաբար վերջինի նկատմամբ կիրառելի դարձնելով քաղաքացիական օրենսդրության՝ գործարքի (պայմանագրի) անվավերության կամ այն փոփոխելու և լուծելու մասին կանոնները:

Նշված գործով արտահայտված դիրքորոշման լույսի ներքո անդրադառնալով փոխառության պայմանագրով ստացված գումարի չվերադարձված մասի դիմաց անշարժ գույքի օտարմանը, որը կատարվել է դատական ակտով հաստատված հաշտության համաձայնությամբ՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հարկային պարտավորությունների առաջացման համար հատկանշական է հիմնական միջոցների և այլ ակտիվների օտարման կամ սեփականության իրավունքի փոխանցման փաստը, այլ ոչ թե նշված գործողության իրացման եղանակը: Նման պայմաններում (...) այն դեպքում, երբ փոխառության պայմանագրով նախատեսված վերադարձման ենթակա գումարի կամ գումարի չվերադարձված մասի դիմաց օտարվում է անշարժ գույք, ըստ էության տեղի է ունենում հիմնական միջոցի օտարում, իսկ փոխառության պայմանագրով տրամադրված գումարը կամ դրա չվերադարձված մասը դիտարկվում է որպես հիմնական միջոցի օտարումից ստացվող հասույթ: Վերջինս իր հերթին դասվում է եկամուտների թվին և ենթակա է ներառման հաշվետու տարում հարկատուի համախառն եկամտի մեջ: (...) հակառակ մեկնաբանության պայմաններում հարկային օրենսդրության իմաստով գույքի օտարումը կարող է ներկայացվել որպես փոխառության պայմանագրով ստացված և չվերադարձված գումարի դիմաց տրվող հատուցում և պարտավորության մարում՝ հնարավորություն տալով շրջանցել գույքի օտարման համար սահմանված հարկային պարտավորությունները:

Սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ կողմերը Երևան քաղաքի առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանի 07.06.2019 թվականի թիվ ԵԴ/3447/02/19 վճռով հաստատված հաշտության համաձայնության 2-րդ և 3-րդ կետերում թվարկված գործարքները կարող էին վիճարկել բացառապես նշված հաշտության համաձայնությունը հաստատած վճիռը բողոքարկելու միջոցով, այնինչ նշված վճիռը չի բողոքարկվել ու մտել է օրինական ուժի մեջ, այսինքն՝ դարձել է վերջնական և պարտադիր, որպիսի հանգամանքն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի պատճառաբանություններն այն մասին, որ հայցվորն առաջ է քաշում օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված հաշտության համաձայնությամբ կողմերի միջև կնքվող քաղաքացիաիրավական պայմանագիրն այլ հիմքով լուծելու հարց, և որ հաշտության համաձայնությունը տնօրինչական սկզբունքի իրացման արդյունքում կողմերի միջև կնքվող գործարք է, որի ուժով վերջիններս վիճելի իրավահարաբերության մասով նորից են որոշում իրենց իրավունքներն ու պարտականությունները՝ դրանով իսկ վերացնելով նախկինում իրենց միջև եղած վեճը, ինչից էլ հետևում է, որ դրանից հետո պայմանագրի լուծման պահանջը չի կարող դուրս լինել դատարանի քննության առարկայի շրջանակներից, անհիմն են և չեն բխում սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներից, քանի որ դատարանի վճռով հաստատված հաշտության համաձայնությունը կամ դրա առանձին պայմանները չեն կարող վերանայվել նույնիսկ հանգամանքների էական փոփոխության հիմքով:

Վերոգրյալից հետևում է, որ Դատարանը, 24.11.2022 թվականի որոշմամբ քաղաքացիական դատավարության կարգով քննության ենթակա չլինելու հիմքով կարճելով գործի վարույթը, կայացրել է օրինական և հիմնավորված դատական ակտ, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 151-րդ և 182-րդ հոդվածների այնպիսի խախտում թույլ տալը, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի 17.03.2023 թվականի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված՝ վերաքննիչ դատարանի դատական ակտն ամբողջությամբ բեկանելու և առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելը և Դատարանի դատական ակտին ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատարանի 24.11.2022 թվականի «Գործի վարույթը կարճելու միջնորդությունը քննության առնելու մասին» որոշմանն օրինական ուժ տալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի

համաձայն՝ պետական տուրքի գանձման օբյեկտները, պետական տուրքի չափը և վճարման կարգը սահմանվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ գործով մի քանի հայցվորների կամ բողոք բերողների առկայության դեպքում նրանցից յուրաքանչյուրը կրում է իր գործողություններով առաջացած դատական ծախսերի մասնաբաժինը, իսկ մի քանի պատասխանողների առկայության դեպքում նրանցից յուրաքանչյուրը կրում է իր գործողություններով առաջացած դատական ծախսերի մասնաբաժինը, բացառությամբ այն դեպքի, երբ վիճելի իրավահարաբերությունը ենթադրում է համապարտություն: Այդ դեպքում պատասխանողները կրում են դատական ծախսերի փոխհատուցման համապարտ պարտականություն: Մասնաբաժինները որոշելու անհնարինության դեպքում դատական ծախսերը նրանց միջև բաշխվում են հավասարաչափ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն գլխի [ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլուխ] կանոններին համապատասխան:

Վճռաբեկ բողոքը բավարարելու՝ Վերաքննիչ դատարանի 17.03.2023 թվականի որոշումը բեկանելու և Դատարանի 24.11.2022 թվականի «Գործի վարույթը կարճելու միջնորդությունը քննության առնելու մասին» որոշմանն ամբողջությամբ օրինական ուժ տալու պայմաններում անդրադառնալով պետական տուրք բռնագանձելու հարցին՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ Դատարանի 24.11.2022 թվականի «Գործի վարույթը կարճելու միջնորդությունը քննության առնելու մասին» որոշմամբ դատական ծախսերի բաշխման հարցը լուծված լինելու, ինչպես նաև Վերաքննիչ դատարանում Արամ Սանոսյանի կողմից վերաքննիչ բողոքի համար պետական տուրքի գումարը վճարված լինելու պայմաններում դատական ծախսերի բաշխման հարցն այդ մասերով պետք է համարել լուծված: Միաժամանակ նկատի ունենալով, որ Վերաքննիչ դատարանի 17.03.2023 թվականի որոշման դեմ վճռաբեկ բողոք ներկայացնելու համար Համապատասխանողները վճարել են 20.000 ՀՀ դրամ, իսկ ներկայացված վճռաբեկ բողոքը բավարարվում է և օրինական ուժ է տրվում Դատարանի 24.11.2022 թվականի «Գործի վարույթը կարճելու միջնորդությունը քննության առնելու մասին» որոշմանը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Արամ Սանոսյանից հոգուտ Համապատասխանողների գանձման է ենթակա 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այլ դատական ծախսերի վերաբերյալ պահանջ ներկայացված չլինելու պատճառաբանությամբ այդ ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ ու 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17.03.2023 թվականի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 24.11.2022 թվականի «Գործի վարույթը կարճելու միջնորդությունը քննության առնելու մասին» որոշմանը:

2. Արամ Սանոսյանից հօգուտ Կարեն Մխիթարյանի և Անժելա Հարությունյանի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող _____	Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
Զեկուցող _____	Ս. ՄԵՂՐՅԱՆ
_____	Ն. ՀՈՎՍԵՓՅԱՆ
_____	Է. ՍԵՂՐԱԿՅԱՆ
_____	Վ. ՔՈՉԱՐՅԱՆ